

Արտնկուին դեղձի ծառ, սալոր, յասմիկ և կծու տունկեր, ինչպէս սոխ, սխտոր, և այլն :

Պարտէզները զարդարելու ատենն ալ աս է . ելակներուն աւելորդ տերեւները պէտք է կտրել :

Թէ որ հովերը փչելու ըլլան, պէտք է ջուր տալ բոյսերուն, բայց ծնեբեկին ջուր պէտք չէ :

Սերմանոցներու մէջ ծածքի տակ դրուած տունկերը, ինչպէս լեմոնը, և այլն, աս ամսուս մէջ դուրս կը հանեն :

Շերամ որդին հաւկիթները կը տաքցընեն որ ձագերը ելլեն, երկիրն ալ անոնց կերակուր կը պատրաստէ . յասմիկի տերեւները կը ծլին, վերջը թթենին ալ կուգայ :

Ընծրեւները երկայն չեն քշեր . ասդիս անծրեւ եկած ատենը՝ անդին երկինքը կը ծիծաղի, և անծրեւին կաթիլներուն վրայ կը տարածուի գոյն զգոյն ծիրանի գօտին :

Սչակը աշխատանքին պտուղը վաստակելու յուսով կ'ուրախանայ՝ քանի որ օգերը կը շտկուին, և Լստուծոյ փառք կուտայ :

Լս ամսուս մէջ եկեղեցին ալ կը զուարճանայ Յիսուսի սուրբ Յարութեան լուսովը . դու ալ հոգևոր պատրաստութեամբ կրնաս սիրտդ հոգևոր ապրիլի պարտէզ մը դարձընել :

Բայց Լսրիլը չգացած՝ նայէ քեզի ինչ կ'ըսէ .

Ի կարմրիկ ուրի կապոյտ  
Յամպերոյն ոսկեթել  
Երբինազարդ կողոպուտ  
Առեալ գամ Ապրիլէ .  
Յաստեղաց 'ի վայրէջ  
Ընդ լերինս ընդ հովիտ  
Ձիմօթոյ ծաղկառէչ  
Տարածեմ գեղափիթիթ :  
Վարդամասն իմ ձեռամբ  
Ըզգարունն ես մանուկ  
Որորեմ ամպոյ յամպ  
Ի զեփիւռ հեզասիւզ,  
Եւ բերեալ 'ի պարտէզ  
Ի բնութեան բովանդակ  
Արկանեմ ես 'ի դէմս  
Հըրձուանաց ըզիմակ :  
Տես քանի քաղցր շունչ,  
Քաղցր և ջուրք կարկաջունք :

Քաղցր հաւուց և մրմունջ .  
Յամենուստ օրհնութիւնք : . .  
Այլ զիս զուարթս Ապրիլէ  
Ձիս աւաղ, Գրիգորիկ,  
Ձիս յերկար նըջմարել  
Չունին մարգն և մայրիք :  
Ահա վարդք և յասմիկ,  
Մանուշակս իմ ահա  
Թերթ 'ի թերթ ընկեցիկ  
Ըզվարսիւքս անկեալ կայ :  
Եւ զհանգոյն նոցա զիս  
Ձվաղանցուկս արդ վանէ,  
Ահ, եղբայրն իմ Մայիս,  
Ընդ գարնան դուռն հանէ,  
Ընդ որ ինքն իսկ ընդ փոյթ,  
Եւ զգարուն տանի ընդ իւր,  
Այսպէս գամբ 'ի գնալ շոյտ  
Առժամեայ երկրիս հիւր :  
Այլ դու զգօն Գրիգորէ,  
Ի տիս յայդ գարնայնի  
Ձուղղութեանց զոր բերէ  
Ծաղկանց հոյ գեղանի,  
Մի՛ միայն ընդ երեսս,  
Այլ և խոր 'ի սրտիդ  
Այժմէն քաջ սրվուեսցես,  
Գոլ գարուն մըշտափիթիթ :

ՏՆՏԵՍԱԿԱՆ ԳԻՏՈՒԹԻՒՆ

ԴԱՍՏԻԱՄԱԿՈՒԹԻՒՆ

Գ. Լսլեայլ Բնաորոտիւն ունեցող արդոյ հեռ պէտք չէ նոյն ոճով վարուիլ :

ԲԱՐՈՅԱԿԱՆ դաստիարակութե սկզբունքները իրաւ է որ միշտ նոյն են, և անոնց մէկ հատիկ վախճանն է՝ տղաքը առաքինութեան և իմաստութեան մէջ կրթել . բայց աս վախճանին հասնիլը անկարելի կ'ըլլայ՝ թէ որ ամէն տղու մի և նոյն ոճը բռնենք : Պէտք է տղոց բնութեանը համեմատ դաստիարակութե ոճն ալ յարմարցընել : Տղոց բնութիւնը աղէկ մը հասկընալու է . և թէ որ տղայ մը ինք զինքը պարտըկող ըլլայ, առանց նշան մը տալու՝ պէտք է վրան դիտողութիւններ ընել, մանաւանդ անանկ ատեններ որ տղան առանձին ու ազատ մնացած ըլլալով կարծէ թէ զինքը դիտող չկայ, և ուզածը կ'ընէ . ինչպէս խաղ խաղալու ատենը, և մանա-

1 Տես երես 39, 56 :

ւանդ ընտանի կենդանեաց հետ խաղալու ատենը :

Դ) Կէպէտ և ամէն տղաք զատ զատ բնաւորութիւններ ունին , բայց հետագայ յատկութիւնները գլխաւոր կրնան սեպուիլ :

Ա . Ոմանք բնութեամբ խիստ ազէկ կ'ըլլան , այսինքն՝ ի բնէ բարի բաներու կը փափաքին , չարէն ալ կը խորչին : Երոնք տարիքին առնելով՝ ազէկութեան մէջը աւելի կը հաստատուին . ուստի այսպիսի տղաք խոհեմով իմաստուն դաստիարակէ զատ՝ ուրիշ բանի կարօտ չեն : — Երոնք հակ , ոմանք ալ կան որ բնութեամբ չար , ու աւելի գէշութեան հակամէտ են : Եյսպիսիները դաստիարակելը շատ աւելի դժուար է , և ասոնց կըրթութիւնը խիստ պզտիկուց սկսելու է , միշտ ջանալով որ իրենց բնութեանը յարմարցուի դաստիարակութեան ոճը : Երոնց հետ քիչ մը խստութիւն ալ բանեցընելու է՝ թէ որ քաղցրութեամբ չշահուին :

Բայց աս երկու տեսակ ներհական բնութիւնները քիչ անգամ կը գրտնուին . այսինքն անանկ որ մէկը բոլորովին բարւոյն փափաքի , մէկաւն ալ բոլորովին չարին ետեւէ ըլլայ :

Բ . Ոմանք բնութեմբ հեզ և խօսք մտիկ ընող կ'ըլլան . այսպիսիներուն ամենայն քաղցրութիւն պէտք է ցուցընել , վասն զի խստութեամբ կ'աւրուին : — Ոմանք ալ խեղ ու խօսք չհասկըցող կ'ըլլան . այսպիսիները կը նմանին անկիրթ ու խեղ ձիու , որ նախ ընտանեցընելու , վերջը ճարտարութեմբ բանեցընելու է , միշտ սանձը քաղցրութեամբ շարժելով . վայ է թէ որ յանկարծ խարազան կամ խթան գործածես : Պէտք է նայիլ որ ոչ անկէ յաղթութիւն , և ոչ անոր ուժով ցնցմանը տեղիք տաս . մանաւանդ թէ գէմ դնելու է , բայց միշտ խոհեմութեամբ , մինչև որ հնազանդիլ սորվի :

Գ . Ոմանք բնութեամբ աշխոյժ ու կրակոտ կ'ըլլան , բայց միանգամայն խօսք ալ կը հասկընան . ասոնց

հետ միշտ խոհեմութեամբ պէտք է երթալ , ու մեծ քաղցրութիւն ցուցընել : Դ) Կ որ յանկարծ ուղիղ ճամբէն խոտորին , մէկէն դիմացնին առնելու է . վասն զի երբոր իրենց կրակոտութեամբը չափերնէն դուրս կ'ելլեն , նորէն իրենց չափը դարձընելու համար՝ քիչ մը խստութիւն պէտք է : Կրակոտ տղաք միջին ճամբով առաջ չեն կրնար երթալ . թէ որ մէյմը գէպ ՚ի բարին դառնան , առաքինի մարդիկ կ'ըլլան . իսկ թէ որ գէպի չարը ծուին , անզգամներու գլուխ կ'ըլլան : — Պաղասային բնաւորութիւն ունեցող տղոց հետ բոլորովին տարբեր ճամբայ բռնելու է . ասոնք չարին ու բարւոյն անտարբեր ըլլալով , շատ անգամ ոչ ախտեր և ոչ առաքինութիւններ կ'ունենան : Եյսպիսիները աղէկ ճամբուն մէջ դնելէն ետեւ՝ անդադար յորդորելու է խօսքով ու գործքով որ իրենց անտարբերութիւնն ու դանդաղութիւնը մէկգի թողուն , ու ամէն բանի մէջ սրտով աշխատին :

Դ . Ոմանք բնութեամբ համարձակ ու պարզամիտ են . ինչ որ մտքերնէն անցնի՝ մէկէն բերնով ալ կը զուրցեն : Եյսպիսիներուն պարզտրտ համարձակութիւնը թէ որ մէկը գէշ բանի տեղ դնելով խափանելու ըլլայ , մեծ փնաս կ'ընէ անոնց : Երոնք երբոր քիչ մը մեծնան , խոհեմութեամբ շարժիլ սորվեցընելու է իրենց , որպէս զի ամէն մտածած բաներնին ուրիշներուն հաղորդելով թէ իրենց և թէ ուրիշներուն փնաս մը չհասցընեն : Բնդ հակառակն տղաք ալ կան որ բնութեամբ կասկածոտ ու ծածուկ են : Եյսպիսիներուն պարզմտութեօրինակ տալու է , առանց իրենց հետ խաբէութեամբ խօսելու . և ջանալու է որ վստահութիւն առնեն դաստիարակին վրայ . և թէ որ այսպիսիները ըրածնին կամ խօսածնին պարտրկելու ջանան՝ պէտք է պատժել , ու իրենց ըսել թէ աս բանիս համար միշտ պիտի պատժուին :

Ե . Տղաք կան որ բնութեամբ ան-

փոփոխ ու հաստատուն են , թէպէտ և յամառ ու կոպիտ չըլլան : Ըստպիսիսները թէ որ աղէկ ճամբու մէջ դըրուին , ինչուան վերջը հաստատ կը մնան առաքինութեանց մէջ . նոյնպէս ալ թէ որ աղէկ կըթուլթուլն չառնուն , զիրենք չար ճամբէն դարձնելը անկարելի կ'ըլլայ : Ըսոնց հետ քաղցրութիւն պէտք է բանեցընել . և թէ որ մէյմը առաքինութեան համը առնեն , իրենք իրենցմէ առաջ կ'երթան : — Ընդհակառակն , ան տղաքն որ փոփոխամիտ են ու ամէն բանի մէջ շուարած կերպ մը ունին , զանոնք միշտ արթնութեամբ ու ապահով ճամբով առաջ տանելու է . թէ որ քիչ մը ատեն իրենք իրենց մնան , դիմացնին ինչ առաջնորդ ելլէ՝ անոր կը հետևին , ու մէկէն կը խոտորին իրենց սովորական ճամբէն : Ըսոնց վրայ երկայն ժամանակ կըթուլթուլն ընելու է որ բարի սկզբունքները իրենց սովորութիւն մը դառնան . ան ատեն այնչափ վախ չըլլար թէ շուտով մոլորին :

2. Տղաք կան որ բնութեամբ արիասիրտ ու յանդուգն են , ու բանէ մը չեն վախնար : Ըատ զգուշանալու է այսպիսիներուն հետ խստութեամբ վարուելէն . վասն զի սաստիկ բարկացող ու անսանձ կ'ըլլան : Վաղցրութեամբ դաստիարակը դիւրաւ կրնայ շահիլ զիրենք . բայց երբեմն քիչ մը խստութիւն կրնայ բանեցուիլ , որպէս զի իրենք զիրենք ազատ կարծելով՝ յանդուգն չըլլան , ու դաստիարակին հեզութիւնը երես չառնեն : — Իսկ երկիւղած ու վախկոտ տղաքը միշտ կը վախնան որ չըլլայ թէ յանցանքի մէջ իյնան , իրենց վարժապետին աչքէն ելլեն ու պատիժ կամ յանգիմանութի լսեն : Ըսոնց հետ վերջի աստիճանի անուշութեամբ ու քաղցրութիւն պէտք է երթալ , միշտ ծիծաղ երես ցուցընել , և ամէն հնարք ընել որ իրենց դաստիարակին վրայ մեծ վստահութիւն առնեն , ու սրտերնէն ան փուճ երկիւղը փարատի : Ըստ տեղւոյն նաև դովելու ու յորդորելու է ասոնք .

բայց գովեստը քիչ պիտի ըլլայ , որպէս զի երես չելլեն ու չհպարտանան :

3. Իտլոր վերի ըսուած յատկութիւններով խառն բնաւորութի ունեցող տղոց հետ վարուելու համար՝ խառն ոճը բունելու է . այսինքն քաղցրութիւն և ծանրութիւն , խստութի ու գթութիւն . բայց միշտ քաղցրութիւնն ու հեզութիւնը աւելի պիտի ըլլան : Ըս բանս յայտնի է որ ամէն տղաք քիչ շատ՝ իրենց բնութիւնը կը փոխեն . ուստի խիստ հարկաւոր է իրենց բնութեան փոփոխիլը ճանչնալ , ու ըստ այնմ վարուիլ իրենց հետ . ապա թէ ոչ , շատ փնասակար կ'ըլլայ ան ատեն առջի ոճով վարուիլը . վարպետ նաւապետը քամիին փչելուն յարմար առագաստը կը դարձնէ :

ՕԳՏԱԿԱՄ ԳՒՒՏԵՐ

Կարագը դեղնագոյն ներկելու կերպ :

Տե՛ղ կայ որ կարագը ինչուան որ դեղին գոյն չունենայ՝ ամենուն ընդունելի չըլլար . աս գոյնը տալու համար շատը քրքում՝ կը գործածեն . բայց մենք աւելի դիւրինն ու քիչ գնով ըլլալիքը դնենք :

Սողովէ շատ մը դեղին գաթիճէ լիւնի կամ կիւն լիւնի ըսուած ծաղկէն . ասոնց թերթերը՝ այսինքն ծաղկին գունաւոր տերեւները փրցուր , ու հողէ ամանի մը մէջ դրած՝ բերանը ամուր գոցէ , ու մառանը դիր : Վանի մը ամանէն ետքը աս տերեւները հալած խէժի պէս թանձրիկէ դեղին ոսկիի գունով նիւթ մը կը դառնան : Ըս նիւթը կը գործածեն ձմեռուան մէջ կարագը գունաւորելու համար . այսինքն որչափ որ կ'ուզես դեղինընել՝ այնչափ կը դնես ինոցիկին մէջ աս նիւթէն , ու սովորական կերպով կը հարես . իսկ չափը փորձով կը սորվուի :